ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ <<ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Արտակ Գևորգյան

Բանալի բառեր - քաղաքացի, ժողովրդավարական հասարակություն, քաղաքացիական հասարակություն, պետություն, հասարակագիտություն

«Հասարակագիտություն» առարկան, առարկայական խնդիրների լուծումից զատ, նաև լուրջ առաքելություն ունի քաղաքացիական դաստիարակության, հասարակական-քաղաքական գիտակցության ձևավորման ու զարգացման ուղղությամբ:

Հասարակագիտությունը բացահայտում է հասարակական հարաբերությունների բարդ համակարգը, թույլ է տալիս սովորողներին յուրացնել աշխարհայեցողության և քաղաքականության տարրերը և լուծել նմանատիպ այլ խնդիրներ:

Հանրակրթական դպրոցի առջև դրված է սովորողներին համապատասխան գիտելիքներ տալու, կարողություններ ու հմտություններ զարգացնելու խնդիրը, որպեսզի քաղաքացին կարողանա լիարժեք ապրել հասարակության մեջ: Մեր կարծիքով, առանց հասարակագիտության և հասարակագիտական այլ առարկաների այդ հարցը չի լուծվի:

Անշուշտ, ուսուցիչներից շատերին են հուզում հանրակրթական դպրոցում հասարակագիտական կրթության հիմնահարցերը:

Դասագրքերի, ուսումնական ձեռնարկների մեծածավալ բնույթը լուրջ խոչընդոտ է դառնում հասարակագիտական կրթության ճանապարհին:

«Հասարակագիտություն» առարկայի հիմնական նպատակը մարդու և հասարակության վերաբերյալ գիտական պատկերացումներ ունեցող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացու ձևավորումն է: Առարկայի կարևոր նպատակներից է նաև սովորողի կողմից անձնական,

հասարակական և ազգային շահերի միասնության, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործում սեփական մասնակցության, մարդկանց միջև հավասարություն, արդարություն, հանդուրժողականություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության, գենդերային հավասարության և հասարակության մեջ սեռային խտրականության բացառման կարևորմանը[1]:

Քաղաքացիական հասարակությունը կարելի է պատկերացնել որպես պետությունից անկախ գործող հասարակության սոցիոմշակութային կենսագործունեության ապահովման վերարտադրման համակարգ կամ որպես սոցիալական, տնտեսական և հոգևոր տարածություն, որտեղ գործում են իրենց մասնավոր հետաքրքրություններն իրականացնող ազատ անհատները:

Քաղաքացիական հասարակությունը ի հայտ է եկել հասարակության զարգացման որոշակի փուլում, երբ պատմական գործընթացում հայտնվում է քաղաքացին՝ որպես իրավունքների ու ազատությունների որոշակի համակարգով օժտված հասարակության ինքնուրույն անդամ: Քաղաքացիական հասարակության գաղափարի զարգացման գործում մեծ ավանդ ունի Հեգելը: Նա գրում է, որ քաղաքացիական հասարակությունը ընտանիքի և պետության միջև է. այն հիմնված է մասնավոր սեփականության սոցիալական շերտավորման, հետաքրքրությունների բազմազանության և անհատների ու խմբերի փոխներգործության վրա: Այն պլյուրալիստական է և հակասական, այդ հասարակության յուրաքանչյուր ազատ մարդ՝ նպատակ է իր համար, իսկ մնացածները՝ ոչինչ: Հակասող հետաքրքրությունների համաձայնեցման համար պահանջվում է գերագույն դատավոր՝ ի դեմս պետության, որն արտահայտում է ընդհանուր հետաքրքրությունը և, այդպիսով՝ կառավարում քաղաքացիական հասարակությունը:[2]

Գոյություն ունեն քաղաքացիական հասարակության տարբեր ընկալումներ: Տարածված և նեղ ըմբռնումներից մեկը քաղաքացիական հասարակությունը բնորոշում է որպես երրորդ ոլորտ, որը տեղակայված է պետության (առաջին ոլորտ), տնտեսության (երկրորդ ոլորտ) և անձնական կյանքի միջև և որում կազմակերպություններն ու խմբերը ներկա-յացնում են քաղաքացիների շահերն ու կամքը: Այսպիսով քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է հիմնականում իր կազմակերպությունների թվով և ուժով[3]: Այն ներառում է ոչ

[1] Տես՝ «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչ, (8-9-րդ դասարաններ), 2012, Հայեցակարգ:

[2] Гегель, Философия права.-Москва: Мысль.,1990

[3] Evers 2010, p. 283. Մեջբերված է ըստ՝ Շրջակա միջավայրը և քաղաքացիական ներգրավումը ԷկոԼաբ ծրագրի ձեռնարկի (էջ 17)

կառավարական կազմակերպություններ (կամ ՀԿ-ներ՝ օրինակ Կարմիր Խաչ, Amnesty Inernational կամ Greenpeace), հիմնադրամներ (ինչպես Ռոբեր Բոշի կամ Գալուստ Գյուլբենկյանի հիմնադրամները), արհմիություններ և կրոնական խմբեր:

Հասարակագիտության նպատակն է՝ ծանոթացնել քաղաքացիական կրթություն հասկացության հետ, բացատրել, թե ինչ է քաղաքացիությունը, գիտենալ և կարողանալ նկարագրել քաղաքացիների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև պատկերացում տալ ժողովրդավարական հասարակության մասին: Ժողովրդավարական հասարակության մեջ ամեն ինչ բարդ է և բազմազան, քանի որ այդ հասարակությունը հիմնված է տարբեր և բազմազան հայացքների գոյության վրա, որոնք պետք է լսել և հարգել, անգամ եթե համաձայն չես դրանց հետ: Քաղաքացիական կրթության նպատակն է նպաստել մշակույթի զարգացմանը, հանդուրժողականությանը, ինչը կազմում է քաղաքակրթության էությունը: Հասարակության մեջ կարևոր դրական փոփոխությունները հնարավոր են դառնում անհատների, քաղաքացիների զորացման և գիտակցության վերափոխման ճանապարհով: Քաղաքացիությունը ոչ թե ենթադրում է մեկ կարծիքի վրա գտնվող անդեմ կոլեկտիվ, այլ անձնական ազատություն և պատասխանատվություն ունեցող ինքնուրույն անհատների գոյություն: Քաղաքացիական հասարակության կայացման գործում մեծ է քաղաքացու դերը, իսկ քաղաքացի ձևավորելու գործում, մեր կարծիքով, մեծ դեր է կատարում դպրոցը:

Առարկայի ուսումնական նպատակները

- Հասարակագիտության ուսուցումը պետք է ուղղված լինի սովորողների հետևյալ կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝
- գնահատել անձի և հասարակության վերաբերյալ տարբեր տեսակետները և ճիշտ կողմնորոշվել դրանց հիմնավորվածության հարցում.
- տարբեր սկզբնաղբյուրներից տեղեկատվություն ընտրել, վերլուծել, եզրակացություններ անել.
- աշխատել թիմով, համագործակցել և կարողանալ ներկայացնել ստացած գիտելիքը և կատարած աշխատանքը.
- հանրային կյանքի տարբեր ոլորտներում կիրառել հաղորդակցվելու համարժեք ձևեր.
- ուսումնասիրել և ներկայացնել համայնքային հիմնախնդիրներ.
- ձևավորել փոխադարձ հարգանքի և փոխօգնության հարաբերություններ մարդկանց հետ առօրյա շփումներում.

- ըմբռնել միջանձնային հարաբերություններում հոգեբանական առողջ մթնոլորտի կարևորությունը, նպաստել դրա ձևավորմանը՝ ընտանիքում, դպրոցում, ընկերական շրջապատում.
- հասկանալ և գնահատել իր հասարակական դերը՝ որպես որոշակի ժամանակաշրջանում և որոշակի վայրում ապրող քաղաքացի.
- գնահատել օրենքների և օրինականության նշանակությունը՝ օրինապաշտ և ակտիվ քաղաքացի դառնալու համար.
- օգտվել ազգամիջյան և միջազգային համագործակցության փորձից.
- սովորողի մեջ ձևավորել սեփական կարծիքն արտահայտելու և այն պաշտպանելու կարողություններ
- փնտրել, գտնել և կիրառել ինքնուրույն, այլընտրանքային լուծումներ սոցիալական և հոգեբանական տարբեր իրավիճակներում.
- դրսևորել ստեղծագործական մտածողություն.
- ունենալ գործուն քաղաքացիական դիրքորոշում և գործնականում կիրառել ժողովրդավարության սկզբունքները:

Ուշագրավ է միջին դպրոցի սովորողների կարծիքը հասարակագիտություն առարկայի նշանակության մասին: Ստորև բերենք մեր դպրոցում իմ կողմից հարցմանն ի պատասխան սովորողների հայտնած մի շարք տեսակետներ:
«Հասարակագիտական կրթությունը, իմ կարծիքով, պետք է օգնի կյանք մտնել:

Հասարակագիտությունը օգնում է մեզ կյանքում ճիշտ ապրելու: Հասարակագիտությունը իմ կարծիքով հնարավորություն է ճշմարտության և սխալի մեջ ընտրություն կատարել»:

«Ինչպե՞ս դառնալ այն, ինչ որ պետք է լինի: Դրա համար նա պետք է ճանաչի ինքն իրեն, ձևավորի սեփական հայացքները կյանքի նկատմամբ, կարողանա պաշտպանել իր կարծիքը: Հասարակագիտությունը ամեն ինչի հիմքն է, դրա պատճառով էլ հասարակագիտության դասընթացը մեզ համար դառնում է անհրաժեշտություն: Ժամանակակից ծանր ու դաժան աշխարհում պետք է ճիշտ վերաբերմունք ձևավորվի իրադարձությունների նկատմամբ, մարդը պետք է կարողանա հարգել ինքն իրեն և ուրիշներին»:

«Երբ շփման շրջանը կդառնա ավելի լայն, քան ընտանիքի շրջանը, անհրաժեշտ է իմանալ, թե ինչ խնդիրների կհանդիպես»:

«Ես համարում եմ հասարակագիտությունը կարևոր և հետաքրքիր առարկա: Բայց միևնույն է. իմ վերաբերմունքը նրա նկատմամբ երկակի է: Պե՞տք է արդյոք հիշել

գիտնականների, փիլիսոփաների անունները, նրանց տեսությունը: Այդ տեղեկությունները չեն մնա հիշողության մեջ»:

«Անհրաժեշտ է իմանալ գիտնական-փիլիսոփաների տարբեր տեսակետները մարդկության հասարակության զարգացման պատմությունից»:

«Սկզբում պետք է քննարկել համամարդկային արժեքները, իսկ հետո խորանալ նրանց մեջ»:

«Մենք հիմա շատ առարկաներ ուսումնասիրում ենք շաբաթը մեկ անգամ: Երբեմն մոռանում ենք, թե ինչի մասին ենք խոսել նախորդ դասին: Իմ կարծիքով ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել գրականությանը, պատմությանը, հասարակագիտությանը, տնտեսագիտությանը: Այս առարկաները հետաքրքիր են և օգնում են մեզ հասունանալու, զարգացնելու խոսքը, հասկանալու՝ ինչ է կատարվում շուրջբոլորը, ինչպես հաղթահարել խնդիրները»:

Այսօր ներդրվում են հասարակագիտության ուղղությամբ դասընթացներ. տնտեսագիտություն, քաղաքագիտություն և այլն: Եվ այս բոլորը՝ շաբաթը մեկ անգամ: Փորձը ցույց է տալիս այսպիսի ուսուցման ցածր արդյունավետությունը: Ավելի լավ է մտածել դասընթացի ամբողջացման մասին: Այս դեպքում պետք է կառուցվի դասավանդման տրամաբանական կարգ, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

Հասարակագիտությունը հումանիտար գործառույթ ունեցող առարկա է, այն նպաստում է մարդու կողմից ինքն իրեն ձևավորելուն, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի դասավանդման ընթացքում տեսականն ու գործնականը զուգահեռվեն միմյանց:

Օրվա դասի պլան

Դասի թեման՝ Քաղաքացիական հասարակություն: Հասարակական կազմակերպություններ: Դասի նպատակները ա) ակադեմիական

- Պատկերացում տալ քաղաքացիական հասարակություն հասկացության, քաղաքական և հասարակական կազմակերպությունների մասին

Արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- Ներկայացնել քաղաքացիական հասարակություն հասկացությունը
- Տարբերակել քաղաքական և հասարակական կազմակերպությունների գործառույթները

բ) սոցիալական

- Քաղաքացիական հասարակությունը ներկայացնել որպես ժողովրդավարության անբաժանելի մաս, որտեղ մարդու իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Անհրաժեշտ պարագաներ՝ դասագիրք, A4 ֆորմատի թուղթ, մարկեր, բաշխիչ նյութեր
Ցուցադրական նյութեր՝ թեմային վերաբերվող սլայդներ
Հիմնական հասկացություններ՝ ժողովրդավարություն, քաղաքական և հասարակական կազմակերպություններ, ժողովրդավարական արժեքներ, քաղաքացիական դիրքորոշում
Մեթոդներ և հնարներ՝ կարճ դասախոսություն, հարց ու պատասխան,
«Վեննի դիագրամ», T-ձև աղյուսակ
Դասի ընթացքը.
Խթանման փուլի նկարագրությունը՝ մտքերի տարափ

- Ի՞նչ է ժողովրդավարությունը
- Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը
- Սովորողներին հանձնարարել՝ աշխատանք զույգերով, բաժանել թղթիկներ, որոնց վրա գրված բառերից առանձնացնել ժողովրդավարական արժեքներ
- Կարճ դասախոսություն «Քաղաքացիական հասարակություն» թեմայով, ներկայացնել հատված Հայաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Մարի Յովանովիչի «Քաղաքացիական հասարակությունը Հայաստանում» թեմայով ելույթից (Երևանի պետական համալսարան, 28 փետրվարի 2011թ.)

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը.
Երեխաներին բաժանել 2 խմբի, յուրաքանչյուրին տալ անհատական ենթաթեմա՝
I –խումբ՝ քաղաքական կազմակերպություններ
II-խումբ՝ հասարակական կազմակերպություններ:
Առաջադրանքների ներկայացում:
Դասախոսության նյութը, որպես բաշխիչ նյութ, հանձնարարել 2 խմբերին՝ համեմատել քաղաքական և հասարակական կազմակերպությունների գործառույթները (օգտագործելով «Վենի դիագրամը», «T-աձև աղյուսակ մեթոդները):
Կատարված աշխատանքների ներկայացում խմբերի կողմից: Անհասկանալի տերմինների և բառերի բացատրություն:
Կշռադատման (գնահատման) փուլի նկարագրությունը Կատարված աշխատանքների ամփոփում: Գնահատում :
Տնային հանձնարարություն՝

ա. Գրել շարադրություն «Մարդու և քաղաքացու դերը քաղաքացիական հասարակության կայացման գործում»:
բ. Պատրաստել համառոտ ելույթ՝ զեկուցում «Մամուլի և համացանցի դերը քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում» թեմայով:

Ամփոփում

Հասարակագիտություն առարկայի դասավանդումը նպաստում է սովորողի մոտ քաղաքական ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը: Ուսուցման գործընթացում սովորողի քաղաքացիական գիտակցությունը բարձրացնելու համար շատ կարևոր է ինքնուրույն գործնական աշխատանքների կատարումը, ինչը նաև կնպաստի սովորողների գիտելիքների հարստացմանը ու ամրապնդմանը: Հասարակագիտության դասընթացում պետք է ձևավորվի գիտելիքների այնպիսի համակարգ, որը կնպաստի քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձևավորմանը: Դրան հասնելու համար անհրաժեշտ են կայուն գիտելիքներ, ժամանակակից կյանքի պայմաններին համապատասխան կարողություններ և հմտություններ ունեցող անձնավորություն: Այդ առումով շատ կարևոր է հասարակագիտության, պատմության և այլ հումանիտար առարկաների ուսումնադաստիարակչական հնարավորությունների ավելի լայն կիրառումը:

Գրականություն

1. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Հասարակագիտության ուսումնասիրման արդի հիմնահարցեր, Ձեռնարկ մանկավարժների համար, Երևան, 2005:
2. Ղազինյան Գ., Խաչատրյան Ս., Հասարակագիտություն, ՈՒսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
3. Պատմություն և հասարակագիտություն, ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, ՀՀ ԿԳՆ ԿԾԿ, ԿԱԻ, Երևան, 2007:
4. Պատմություն և հասարակագիտություն, ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ ՀՀ ԿԳՆ, ԿԾԿ, Երևան, 2009:
5. Քաղաքացիական կրթությունը դպրոցում, մանկավարժական գիտամեթոդաբանական հանդես, Երևան, 2002:
6. Гегель Ф. Философия права.-Москва: Мысль, 1990:
7. Обществознание. 100 вопросов и ответов. Б.А.Бочков, Н.А.Федоров Ульяновск:УВАУГА, 2006:

8. Обществознание: учеб. пособие для абитуриентов и студентов вузов, Б.И.Каверин, П.И.Чижик.- М:ЮНИТИ-ДАНА, 2007 :
9. Evers, Adalbert (2010): Zivilgesellschaft, Engagement und soziale Dienste. In: Olk, Thomas; Klein, Ansgar; Hartnuß, Birger: Engagementpolitik. Die Entwicklung der Zivilgesellschaft als politische Aufgabe, Wiesbaden, p. 282302

Concerning to civil society and social science education and other fundamental questions (with the model of social science in high school)

Teaching of social science at school is forming personal views on political knowledge in pupils. During the teaching in order to improve or raise the student's political consciousness, it is too important to do practical works which also supports to strengthening and enriching the student's knowledge. Summing up we need to say that during social science must be forming such a knowledge system,which will help the formation of political active member.in order to rich it,it is necessary to have stable knowledge for modern life conditions and corresponding abilities and skills.in this case it's too important the usage of social science,history and other humanity subjects and teaching-educational opportunities.

ОБ ОСНОВНЫХ ВОПРОСАХ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА И ОБЩЕСТВОВЕДЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ

Артак Геворгян

Резюме

Предмет обществоведение формирует у учащихся самостоятельное политическое мышление. Во время учебной деятельности для повышения политического сознания учеников важное значение имеет выполнение самостоятельных практических работ, которые также способствуют укреплению и обогащению знаний учащихся. На уроках обществоведения должна сформироваться система знаний, способствующая формированию активного члена гражданского общества. Чтобы достичь этого, нам необходимы личности, имеющие знания, умения и навыки, соответствующие условиям современной жизни. С этой точки зрения очень важно широкое использование учебно-воспитательных возможностей обществоведения, истории и других гуманитарных предметов.

Արտակ Գևորգյան - ՀՀ ԿԳՆ Գյումրու հ. 45 միջնակարգ դպրոցի պատմության և հասարակագիտության ուսուցիչ

Էլ. հասցեն՝ turizm-armenia@mail.ru
Հեռախոս՝ 094 37 37 09